

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՏՐԱԽ

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 բուրջի կէս տարվանը 6 բուրջի
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—5 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզումով:

Ցայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Թիֆլիսի Հայոց Սրբազան Առաջնորդի նախագահութեամբ կազմված մասնաժողովը
յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, որ այսօր, կիրակի, ժամը 12 ին, պատա-
րագլից յետոյ՝ Վանքի մայր եկեղեցում կ'աւարտվելու է հոգեհանգիստ

ԲԱԳՈՒԻ ԱՂԵՏԻ ԶՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հոգեհանգիստ կ'աւարտվելու է նաև Թիֆլիսի բոլոր միւս եկեղեցիներում:

Թիֆլիսի միջնակարգ դպրոցների վրացի աշակերտ—աշակերտուհիները խնդրում են
Թիֆլիսի հասարակութեանը, երկուշաբթի, փետրվարի 14 ին, ժամը 12-ին, շնորհ
բերել Վանքի մայր եկեղեցին, ուր կ'աւարտվելու է հոգեհանգիստ

ԲԱԳՈՒԻ ԱՐԻԻՆԱՅԵՆ ԴԵՊՐԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՂՎԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վշտով և անասելի տխրութիւնով բռնված, Արամ և Սողոմոն Միքայելեան Արամեանց-
ները խորը թախծով յայտնում են ազգականներին և ծանօթներին

ԱՆԷՔՍԱՆԻՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ, նրա կնոջ ՄԱՐԻԱՄ ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ և
որդու՝ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՄԱՏԵԱՆԵՐԻ

ողբերգական մահը, որ տեղի ունեցաւ Բագու քաղաքի մէջ Հոգեհանգիստը լինելու է
կիրակի օրը, փետրվարի 13 ին, Մոզմուսի Գէորգ եկեղեցում:

Անստ թոմասեան, Միքայել Միքայել, Յովհաննէս, Գէորգ, Նիկողայոս, օրերով
Մարիամ, ցաւակցաբար յայտնում են իրանց բարեկամներին և ազգականներին, առա-
ջինը իր ամուսնու, իսկ վերջինները իրանց սիրելի և անմոռանալի հոր՝

ԱՆԵՏԻՔ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ ԻՇԽԱՆԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ Կարճատե հիւանդութիւնից յետոյ, փետրվարի 11-ին: Ամ-
բիճը կը լինի ամեն երեկոյ ժամը 7-ին: Յուզարկաւորութիւնը երկուշաբթի, փե-
տրվարի 14 ին, առաւօտեան 10 ժամին իր բնակարանից (Մետեխի փողոց № 54)
դէպի Շամբոնցոց Կարմիր աւետարան եկեղեցին: Թաղումը Սոֆիանի գերեզմա-
նատանը:

Փետրվարի 11 ին կարճատե, բայց ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց
ապրիլաւորուհի կոյս՝

ՆՈՒՆԵ ԳԵՈՐԳԵԱՆ ԾՈՎԱՆԵԱՆՑԸ

որի մասին խոր վշտով համակված յայտնում է ազգականներին և ծանօթներին Թիֆ-
լիսի ու Ստեփաննոս Անայատի մ յրապետ իւ միաբանութիւնով: Դեպքը Անայատից
եկեղեցի կը տարվի փետրվարի 13 ին, ժամը 3 1/2 ին ճաշից յետոյ, ուր և կը կատար-
վի ամբիճը: Իսկ ասօր 14 ին ու պատարագից յետոյ, որ կը սկսվի 11 ժամին, կը
կատարվի թաղումը Սոֆիանի գերեզմանատանը:

Փետրվարի 10 ին վախճանվեց իր կալուածքում—Սանազաբում

ՍԵՐԳԵՅ ԹԵՏՄՈՒՐԱԶԵԱՆ ՄԵԼԻՔ-ԲԵԳԼԱՐԵԱՆԸ

որի մասին հանգուցեալի բնամիջը յայտնում է իր ազգականներին և ծանօթներին:
Թաղումը տեղի կունենայ Սանազաբում փետրվարի 13 ին

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Համակրելի դերը. Պատգամաւորութիւն. Բա-
գուի աղէտի առիթով.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
ժողովը առաջնորդարանում. Բագուի դէպքերի
առիթով. Բագուի կոտորածը. Տխուր փաստեր.
Կոտորածից յետոյ: Բագուի աղէտի արեւելի
օգտին. Ուր է. Բագուի այս անգամ տխուր
իրականութիւնից. Մամուլը Բագուի աղէտի
առիթով. Ներքին լուրեր.—ՀԵՂԱԳԻՐՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՄԱԿՐԵԼԻ ԳԻՐԻՔ

«Մշակի» այսօրվայ համարում մեր ըն-
թերցողները կը կարգան Թիֆլիսում գը-
տնվող պարսկական ընդհանուր հիւպա-
տանի հրաւիրած ժողովի մասին: Մենք
մեծ համակրութեամբ արձանագրում ենք
հիւպատոսի յայտնած վարչական խելացի
հայեացքները և նրա բռնած վստահութիւն
ներշնչող դիրքը: Այնպէս, ինչպէս հիւպա-
տան է նայում ազգերի յարաբերութիւն-
ները վրա, պէտք է նայել ամեն մի խե-
ղացի քաղաքագէտ և վարչական անձ:
Պարսկաստանում, ուր գոյութիւն ու-
նեն հայ ազգաբնակչութեան բեկորներ

զանազան տեղեկութիւն, սովորել տպաւորու-
թիւն կը գործեն հայերի վրա հիւպատոսի
խօսքերը, որոնք համապատասխան են
միևնոյն ժամանակ պարսից կառավարու-
թեան բռնած անաչառ դիրքին դէպի իր
հպատակները:
Սակայն միջոցներ պէտք է ձեռք առ-
նել, որ չարամիտ դիտաւորութիւններով
անձինք չը կարողանան ազդեցութիւն
ունենալ ամբողջի վրա և արեւմտական
ձեռք գործունէներ առաջ չը բերեն նրա
ընդհանրութեան: Թէ պարսիկ և թէ հայ ազ-
գային անձնաւորութիւններ պէտք է
չտապան իրանց բոլոր հեղինակութիւնը
գործ դնելու, որ ցրեն ամեն տեսակ
թիւրիմացութիւններ և նախազգուշացնեն
մարդկանց այնպիսի որոգայթներէն, որոնք
կարող են լարվել անխելաս, դիւրա-
գրգիւ, կամ չար և նենգ անձերի ձեռ-
բով:
Ընդհանուր դժբաղդութեան դէպ կա-
րելի է մաքառել ընդհանուր ջանքերով:
Եւ թող իւրաքանչիւր անձ իր շրջանում
գործ դնէ ամեն միջոց հասկանալու իր
ընդհանրացողներին, թէ ինչ մեծ վիճ-
մեզ սպառնում, եթէ խախտի խաղաղ

միասնակեցութիւնը և բռնկվեն եղբայրա-
դաւ ընդհարումներ թէ մեր երկրի և թէ
Պարսկաստանի ազգութիւններ մէջ:

ՊԱՏԳԱՄԱՐՈՒԹԻՒՆ ԲԱԳՈՒԻ ԱՂԵՏԻ ԱՐԻՐՈՎ

Երէկ, փետրվարի 12-ին, մի յատուկ
պատգամաւորութիւն ներկայացաւ կով-
կասեան կառավարչապետի օգնական գե-
ներալ-լէյտենանտ Մալամային:

Պատգամաւորութիւնը բաղկացած էր
24 անձից: Այնպէս էին Թիֆլիսի ազգու-
կանութեան նահանգական պարագլուխը
և գաւառական պարագլուխը, Թիֆլիսի
քաղաքագլուխը երեք ձայնաւորներին հետ,
մահմեդական մուֆտին, մամուլի ներկա-
յացուցիչներ («Մշակ» «Новое Обозрение»
«Մուրճ» թերթերի խմբագիրներ), բան-
կերի ներկայացուցիչներ (առևտրական,
քաղաքային, կրօնական) ընկերութեան)
արհեստաւորների, մէշչանների գլխաւոր-
ները և պատուաւոր անձինք:

Նահանգական ազգականութեան պա-
րագլուխ իշխան Մեխրով յայտնեց, որ
Բագուի աղէտի դէպքերը զորեցին
Թիֆլիսի քաղաքի և նահանգի ներկայա-
ցուցիչներին, Բագուի մէջ խաղաղութիւնը
վերականգնելու նպատակով, ներկայանալ
այսօր երկրի գլխաւոր կառավարչին և
խնդրել, որ միջոցներ ձեռք առնվին կա-
րելին չափ շուտով հանգստացնել յուզ-
ված ժողովը, որպէս զի հանգիստ կու-
տուրական կեանք սկսվի Բագուի մէջ և
տեղի ունեցած թիւրիմացութիւնները
արձագանք չը գտնեն մեր երկրի ուրիշ
տեղերում: Կարևոր է ուղարկել մի անձ, որ
լինելով մեր շրջանից, կարողանայ չեղնա-
կաւոր կերպով միացնել հայերին և թուր-
քերին, հասկանալով միութեան անհրա-
ժեշտութիւնը երկու կողմերին էլ: Այդ-
պիսի անձ կարող է լինել իշխան Ամի-
րխանով:

Քաղաքագլուխ Վերմիշեպ, խօսելով
նոյն առարկայի մասին ասաց, որ նա
հաւատացած է երկրի գլխաւոր կառա-
վարի բարի մտադրութիւններին և կը
ցանկանար, որ եկած պատգամաւորու-
թիւնը հեռանար, լսելով անձամբ կառա-
վարչապետի հանգստացնող և վստահելի
խօսքերը:

Գներալ Մալամա յայտնեց, որ նա
ամենամեծ յօժարութեամբ կը կատարէ
պատգամաւորութեան ցանկութիւնը և
կուղարկէ իշխան Ամիրխանովին Բագու:
Իշխանը ձայնաւորաբար կրնի երեկոյեան:
Ինչ վերաբերում է իբրեւ, նա իր կողմից
ձեռք է առել և առնում է բոլոր միջոց-
ները կարգ պահպանելու ամեն տեղ և
վերականգնելու, ուր նա խանդավադ է:
Եւ նա կը ցանկանար, որ հասարակու-
թեան ներկայացուցիչները իրանց կող-
մից գործադրէին իրանց բոլոր ազդեցու-
թիւնը ամբողջի վրա զգուշացնելու նրան
այնպիսի արաքներէն, որոնք կարող են
առաջ բերել արևմտի ընդհարումներ:
Կառավարչապետի տեղապահը այնու-
հետեւ օժտեցաւ իւրաքանչիւրին և ծանօ-
թացաւ պատգամաւորութեան անդամնե-
րի հետ:

Պատգամաւորութեան ընդունելութիւն-
ը տեղի ունեցաւ 20 րոպէ:

Նոյն օրը կառավարչապետի տեղապա-
հին ներկայացան «Մշակ», «Новое О-
бозрение» լրագրներին և «Մուրճ» ամ-
սագրի խմբագիրները խօսելու մամուլի
վերաբերեալ մի քանի հարցերի մասին
Բագուի աղէտի առիթով:

Գներալ-լէյտենանտ Մալամա յայտ-
նեց, որ նա ցանկանում է տեսնել փաս-
տական մասը պարզված մամուլի էջի-

րում և իր կողմից խնդրում է զգուշ լի-
նել այնպիսի դատողութիւններէն, որոնք
կարող են զրգուռներ առաջ բերել և
խանգարել ազգութիւններին համերաշ-
խութեան և հանգստութեան վերականգ-
ման գործին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎԱԸ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Ուրբաթ, փետրվարի 11-ին, երեկոյեան ժա-
մը 8 ին Թիֆլիսի հայոց առաջնորդարանում
կայացաւ առաջնորդ Գարեգին եպիսկոպոս Սա-
թուհեանցի նախագահութեամբ մի մեծ և
բազմամարդ ժողով, որին մասնակցում էին
հայ հասարակութեան զանազան դասակարգե-
րի և խաւերի ներկայացուցիչներ—խմբագր-
ներ, հրապարակախօսներ, գրողներ, ֆինան-
սիստներ, առևտրականներ, արհեստաւորներ,
թուով մօտ 100 հոգի:

Բանալով նիստը, սրբազանը յայտնեց, որ
ներկայ ժողովը գումարել է՝ խորհրդակցելու
համար այն միջոցներին մասին, որ պէտք է
ձեռք առնել խաղաղութիւն և անդորրութիւն
հաստատելու թուրք և հայ տարբեր մէջ, և
ապագայ աղէտների առաջն առնելու ու առ-
հասարակ մտածելու, թէ ներկայ ծանր պատ-
մական րօպէին, ճգնաժամին, երբ անգութ
ձեռքեր, զրգուելով մահմետական ժողովրդի
ֆանատիկութիւնը և զինելով նրանց, բաց
են թողել խաղաղ և աշխատասէր հայ տարրի
դէմ և եղբայրասպան կուռ, թշնամութիւն յա-
րուցել այնքան երկար տարիներ միմեանց
հետ հաշտ ապրող երկու դրացի ազգերի մէջ:
Ապա նախագահը առաջարկեց ժողովը կառա-
վարելու համար ընտրել ատենապետ և ատե-
նագիր: Ատենապետ ընտրվեց պ. Սօկրատ
Մէլիք-Արամեան և ատենագիր պ. Հ. Առա-
քելեան: Վերջինս, իբրեւ նախորդ օրը ընտր-
ված նախապետարանող մասնաժողովի կող-
մից տեղեկաբեր, կարգաց այն որոշումները,
որ մշակել էր մասնաժողովի և խնդրեց որ
ժողովը հաստատէ այդ որոշումները, այն է.

- 1) Ի նկատի ունենալով, որ Վեհափառ Կա-
թողիկոսը մեկնել է Էջմիածնից՝ Բագու գնա-
լու, յատուկ պատգամաւորութեան միջոցով
խնդրել Նորին Վեհափառութեանը կանգ առ-
նել Թիֆլիսում:
- 2) Ընտրել մի յանձնաժողով, բաղկացած 12
հոգուց և զննել այդ յանձնաժողովը Վեհափա-
ռի տրամադրութեան տակ, իբրեւ աշակից և
խորհրդատու մարմին: Այդ յանձնաժողովը, որ
կը գործէ Վեհափառի անմիջական ղեկավա-
րութեան ներքոյ, նրա կամ նրա կողմից լիա-
զօր իրաւունքներով կարգված մի եկեղեցա-
կանի նախագահութեամբ, կարող է խորհր-
դակցութեան հրաւիրել իրաւագէտ և ձեռնառ
անձանց թէ հայ և թէ զանազան ազգութիւն-
ներին պատկանող:
- 3) Յանձնաժողովը պէտք է քննէ թէ ինչ
միջոցներ պէտք է ձեռք առնել խաղաղութիւն
պահպանելու, որպէս զի Բագուի աղէտի և
զարհուրելի դէպքերը չը կրկնվեն, չը բռնկվեն
ուրիշ քաղաքներում և գիւղերում, ուր ապ-
րում են խառն հայեր և թուրքեր:
- 4) Դիմել շրջաբնականներով բոլոր քա-
ղաքների և վիճակների հայ հոգեւորականու-
թեան ներկայացուցիչներին—առաջնորդներին,
յաջորդներին և գործակալներին, որ նրանք
խորհրդակցելով թուրք հոգեւորականութեան և
տեղական բանիսաց ու դիրք ունեցող անձ-
նաւորութիւններին հետ թէ հայերից, թէ թուր-
քերից, միջոցներ ձեռք առնեն բարոյական
ազդեցութիւն գործել և ամեն մի թիւրիմա-
ցութեան առաջն առնել ու խաղաղութիւն
պահպանել:
- 5) Աշխատել որ եկեղեցիներում և մզկիթ-
ներում հոգաւ սկանութիւնը բարոյներ տայ
ժողովրդին նոյն նպատակով:
- 6) Ուղարկեցման համար վերոյիշեալ միջոց-
ները գործադրել և Պարսկաստանում, ուր Բա-
գուի աղէտի դէպքերը կարող են արձագանք

գտնել և այդ նպատակով օգտվել թիֆլիսի պարսից ընդհանուր հիւպատոսի սիրալիր առաջարկութեանց, որ ինքը պատրաստ է ամեն կերպ աջակցել—ամեն հնար գործ դնել, որ Պարսկաստանում հայերի և պարսիկներին մէջ որ և է խորտուած առաջ չը գայ:

7) Սկսել անմիջապէս հանգանակութիւն՝ ներթափանց անյապաղ օգնութիւն հասցնելու աղէտի զոհ եղած հայերի ընտանիքներին և հայ դժբախտացածներին և օգնութիւն հասցնելու գործը կենսաբանական յանձնաժողովի ձեռքում:

8) Հրաւիրել թիֆլիսի գլխաւոր քաղաքներէից հայ ազգաբնակչութեան ներկայացուցիչներ՝ խորհրդակցելու համար ձեռք առնելի միջոցներին մասին:

9) Ի նկատի ունենալով, որ ապացուցված իրողութիւն է թէ թուրքերը Բագուում վաղօրը զինուորով բռն են եղել, պարտաւորութիւն դնել յանձնաժողովի վրայ, որ նա հայ և ռուս իրաւագէտներին և ձեռնհաս անձանց աջակցութեամբ մանրամասն և անաչառ ըննութիւն կատարէ աղէտի ծագման իսկական պատճառներին մասին և պատրաստէ մի մանրամասն զեկուցագիր՝ ներկայացնելու Անհափառին, որ իր կողմից ևս ներկայացնէ ուն հարկն է:

Ժողովում երկար վիճաբանութիւններ տեղի ունեցան. եղան նոր սաղարկութիւններ: Ի վերջոյ ժողովը ընդունեց մասնաժողովի ծրագրած բոլոր կէտերը և բացի դրանից, այն կէտը, որ էր Նշանակել իրաւիկ, փետրվարի 13-ին, Վանքի մայր եկեղեցում հոգեհանգիստ ընկած զոհերի յիշատակին:

Ապա ժողովը գաղտնի քուէարկութեամբ ընտրեց յանձնաժողով, բաղկացած հետեւալ անձերից. Աւ. Անարոնեան, Ա. Առաքելեան, Ալ. Մ. Իշխան Արդուսեան, Ա. Բաբեան, Ալ. Մէլք-Աղաբեան, Մ. Մէլք-Աղաբեան, Տ. Յովհաննիսեան, Ա. Սահակեան, Լ. Սարգսեան, Բ. Ս. Ստաւրիսեան, Բ. Ս. Ստեփանեան, Ալ. Բալանթար, և 4 փոխ-անդամ—Բ. Արծրունի, Յ. Սպէնդարեան, Ե. Թովհան և Աւ. Արաւ-խանեան:

ՊԱՐՍԻՑ ՀԻՊԱՏՈՍԸ ԲԱԳՈՒԻ ՂԵՊԵՐԻ ԱՌԹՈՎ

Որքան, փետրվարի 11-ին, թիֆլիսի Պարսից ընդհանուր հիւպատոսը հրաւիրել էր իր մօտ պարսկահպատակ հայ և պարսիկ վաճառականներին թուով մօտ 50, խորհրդակցելու օրվայ կարևոր խնդրի մասին: Հիւպատոսը յայտնեց իր խորին վիշտը այն արեւմտահայ և տխուր դէպքերի առթիւ, որոնք տեղի ունեցան Բագուում: Մենք պարսիկներս և հայերս, ասաց հիւպատոսը, դարձրաք ապրել ենք իբրև հարևաններ: Եւ մեզ վրա մեծ պարտաւորութիւն կայ, որ մեր դրացիական յարաբերութիւնները միայն մարեր, որ դուք աղէկէք այն շրջաններում, որտեղ կարող էք, խաղաղացնելու մարերը և համոզելու բոլորին, որ մեր ամենի երջանկութիւնը և բաղաւորութիւնը կարող է լինել մեր փոխադարձ օգնութեան մէջ: Պարսից կառավարութիւնը խտրութիւն չէ դնում հայերի և պարսիկների մէջ և հայը նրա համար նոյնպիսի սիրելի հպատակ է, ինչպէս բուն պարսիկը:

Հայերը իրանց կողմից յայտնեցին, որ վաղուց տածում են համերաշխութեան գաղափարները և ամեն դէպքում ջարդողում են սէր և փոխադարձութիւն:

—Եւ լաւ գիտեմ, ասաց հիւպատոսը, որ հայերի բանիմաց մասը, հայոց «Մշակ» լրագիրը միշտ քարոզել են համերաշխութիւն և այդ առիթով յայտնում են իմ գոհունակութիւնը: Այո, միայն այդ տեսակ գործունէութեամբ մենք հարկան ազգերս կարող ենք երջանիկ ու խաղաղ ապրել:

Պարսիկները յայտնեցին, որ նրանք հասկանում են Բագուի մէջ տեղի ունեցած դէպքերի փաստակարարութիւնը և իրանց կողմից կաշխատեն միջոցներ գործ դնել, որ Բագուի աղէտը չը կարողանայ կրկնուի:

ԲԱԳՈՒԻ ԿՈՏՈՐԱԾԸ

I

Դժբաղդ առիթ ունենալով տեսնել տխուր և արեւմտահայ աղէտի մի քանի սարսափելի եղելութիւնները սկսած առաջին օրից, կարող եմ հաղորդել «Մշակ» ընթերցողներին հետեւեալը:

Կլրակի, փետրվարի 6-ին մօտաւորապէս 11 ժամ 40 րոպէին եւս ինձ հետ շատերը հայոց եկեղեցու բակում լսեցինք մի պայթիւն: Բոլոր ներկայ եղողները ցնցվեցին այդ պայ-

թիւնից, բայց ոչ որ չը կարողացաւ բացատրել թէ այդ ինչ պայթիւն էր: Շատ ուշ, մի քանի ժամից յետոյ պատմեցին մեզ, որ իբր թէ նաւահանգստում գտնվող մի նաւթակեր նաւակ (բարկազ) պայթել է Բայրիեան հրահանգի առաջ:

Լաված պայթիւնի տպաւորութիւնը դեռ չէր անցել, որ լսեցինք զնդակներին հարուածների ձայներ, փոքր ինչ ուշ լսվեց ատրճանակի ձայն եկեղեցու մօտ գտնվող փողոցում, Աղա-մեանի տան առաջ: Եկեղեցու բակում և պարտեզի վրա մարդիկ շտապեցին դէպի այն տեղը, ուր լսվեց հարուածի ձայնը: Եւ եւս մօտեցայ և ահա ինչ տեսայ:

Թէ ինչ էր եղել մինչև այդ ժամանակ եւս չը գիտեմ. կը պատմեմ եւս իմ տեսածը:

Մի թուրքի, Բաբայեւ ազգանունով, բռնել էին և յանձնում էին ոստիկանին: Ինքը Բաբայեւ յաղթանգում մի մարդ էր, 35 տարեկան մի անձ:

Ոստիկանը Բաբայեւին հետ միասին նստեցին կառք: Բայց Բաբայեւը յանկարծ նորից աւտրճանակի հարուած արձակեց և փախուստ տուեց: Նրա ետեւից ընկան երիտասարդներն և նրան ատրճանակի հարուածներով սպանեցին Կրիկայեան փողոցի մօտ:

Մեռածի դիակը մի քանի ժամանակից յետոյ զրվեց սայլի վրա և ոստիկանի հսկողութեամբ տարվեց նրա տունը: Դիակի յուղակաւորութիւնը կատարվեց հետեւալ շրջանագծով: Նրան տարան նախ Օլգինսկայեան փողոց, յետոյ Նիկոլայեւսկայա, Բագուայա և ապա դէպի նրա տունը:

Կարծես թէ դրանով վերջացաւ ամեն բան: Սակայն դա ազգանշան էր կոտորածի համար, որ և սկսվեց ժամի 4-ից:

II

Եւ կենում էի Կամենիտայեան փողոցում: Տների մեծ մասը թուրքերին են պատկանում: Տներում ապրում են թէ թուրքեր և թէ հայեր ու օտարներ, օրինակ ռուս, գերմանացի, հնէլայ:

Իմ կեցած տան դէմուղէմ ապրում էր թուրքերի Ղազին: Նրա մօտ մշտապէս երթեկնում էին թուրքեր մեծ բազմութեամբ: Ինչ էին խօսում, ինչ խորհուրդներ էին անում՝ ինձ համար անյայտ է:

Թուրքերը, զինված ատրճանակներով և հրացաններով, թափառում էին փողոցներում և հէնց որ նկատում էին հայի, խկոյն գնդակահարում էին: Մեր տան դռները ամուր փակված էին և կեցողները տնից չէին հեռանում: Երբեմնապէս լսում էինք հրացանաձգութիւն անելի դռների և լուսամուտների վրայ:

Ամեն րօպէ սպասում էինք յարձակման: Շատ անգամ բաղնիքում էին թուրքերը մեր դռները, բայց դնապանք բաց չէր անում: Երբեմնապէս փողոցում ձայները սաստկանում էին և մենք փորձում էինք պատասպարան գտնել կամ օտարազգիների բնակարաններում, կամ ջրհորներում:

Հաց ձեռք բերելը դարձել էր անկարելիութիւն: Մենք կարողանում էինք երբեմնապէս օգտվել օտարների մթերքներից: Մեր տան մէջ կարող գերմանուհի, օրինակ, գնաց Ղազինի մօտ և նրանից հաց գնեց իր համար: Յետոյ այդ հացից նա բաժին հանեց և մեզ համար:

Փախչել տնիցից դէպի երկաթուղու կայարան, շատ դժուար էր: Մի խումբ մարդկանց հետ, բաղկացած 30 հոգուց, վերջապէս մեզ աղողից երկու կողմէն և երկու զինուորի առաջնորդութեամբ հանել երկաթուղու կայարանը, որտեղից եւս ճանապարհիցի թիֆլիս: Կողակները կայարան հասցնելուց յետոյ պահանջեցին մեզին առաջնորդութեան համար յիսուն րոպէի, որ մենք տուինք հաճութեամբ: Կողակները օֆիցերը կշտմեց մեզ, թէ ինչու ենք փող տալիս կողակներին, նրանք իբրեւ լուր չունեն փող վերցնելու:

Բայց ամեն մարդ պատրաստ էր մի գոհաբերութիւն անելու իրան պատկառ համար: Եւ վճարում էին բոլորը: Մի քանիսը տալիս էին տասնեակ րուբլիներ և հարիւրից աւելի: Միայն թէ հասնէին կայարան կամ իրանց տները:

III

Դրում եմ այս տողերը շտապով այսօր, փետրվարի 9-ին երեկոյան, երբ սկսվեց հաստատվել խաղաղութիւն քաղաքի մէջ:

Փողոցները լիքն են դիակներով թէ հայերի և թէ թուրքերի: Վերցնել դիակները անկարելի էր մինչև այժմ, որովհետև թոյլ չէին տալիս: Նոյնպէս թոյլ չէին տալիս հրդեհաշէջներին գնալու և հանգսնելու հրդեհները:

Մեզ հաղորդել էին, որ Բեռլին գիւղից պէտք է ձիաւոր թուրքեր խուժէին քաղաքի մէջ: Երէկ եկան թուրքեր Մաշտաղ գիւղից:

Կոտորածը վերջացաւ այսօր ժամի 3-ին: Երկու կողմից կան բազմաթիւ սպանվածներ, որոնց մեծամասնութիւնը հայեր են: Գործօղոյներ համարեալ բացակայ էին: Չօրքը և կողակները չէին միջամտում, այլ հանդիսատեսներ էին միայն:

Գովասանքի արժանի են հայ բանուորները, որոնք անցնում էին փողոցներով, դիմադրում թուրքերին և նրանց փախցնում: Մասնաւոր շատ էին սպանվածներ և վիրաւորվածներ Կոտորակներին փողոցում, պարտաւոր մօտ:

Թուրքերը պարտաւոր շուրջը գտնվող խանութները կոտորաւոր էին և իրերը դուրս թափում: Յարձակվում էին և բնակարանների վրա:

Բորսան, մանր խանութները և բոլոր մագաղիները փակվել էին և ոչ ոք փողոց չէր դուրս գալիս: Դժարութեամբ էր հաց ձարվում:

Մեզ միութեամբ էր մի բան, որ տեղիֆօնը գործում էր և կարելի էր խօսել: Ղուկասեանը, շնորհիւ այն բանի, որ կենում էր նահանգապետի տան մօտ, ամեն օր գնում էր նրա մօտ և խնդրում ձեռք առնել միջոցներ: Եւ խօսեցի Յ. Վեդրովի հետ և յայտնեցի, որ պէտք է համերաշխ գործենք: Նա նոյն միտքն էր յայտնում: Նախ և առաջ այն միտքը հանդէս եկաւ, որ պէտք է հայերը և թուրքերը ժողովին հոգեորակաւորութեան հետ միասին դուրս և միասին գործեն: Բայց անկարելի էր այդ բանը իրագործել, որովհետև կողակներ չը տուին, որպէս զի նրանց հովանաւորութեան տակ գնալին բոլորը դուրս:

Իսկ այսօր կարելի եղաւ կողակների և զինուորների պաշտպանութեան տակ տանել ազգային քաղաքացիներին և հայ, ռուս ու թուրք հոգեորակաւորների դէպի նահանգապետի բնակարանը: Այստեղից ժամի 2-ին թափօրը ժողովրդի հետ միասին, ունենալով յետեւից զօրքը, շարժվեցին դէպի պարապետ, այնտեղ մաղթանք կատարեցին և պատեցին թուրքական փողոցները:

Հանգստութիւնը վերականգնեց: Ով է մեռել ծանօթներից, դեռ չը գիտեմ: Տեսարանը դարձաւ լիկ է:

Սե քաղաքում խաղաղութիւնը չը խանգարվեց: Բայախանում թէև տեղի ունեցան անկարգութիւններ, բայց մեծ ծաւալ նրանք չը ստացան:

Հայերը և թուրքերը այժմ հաւաքում են նպաստներ կարօտեալների համար:

Մ. Ա.

ՏՆՈՒՐ ՓԱՍՏԵՐ

Մալլա-Մօրսկոյ և Սուբխանսկի փողոցներին անկնւնում մի թաղային ոստիկանի իբրատրճանակ են արձակում, որ չէ կպչում. վրդովված ոստիկանը դիմում է մօտակայքում գտնվող զինուորներին և յայտնում իրողութիւնը. զինուորները, թուով մօտ 50 հոգի, ունտէր-օֆիցերի առաջնորդութեամբ գալիս կանգնում են յիշված անկնւնի դիմաց: Ոստիկանը ջոյլ է տալիս այդ տան առաջ գտնվող մի խումբ մարդկանց—որոնք բաղկացած էին այդ տան սխաւանցի մի զոնապանից, մի երկու ջրէրի սոյլապաններից և այլն, իսկ տան պատշգամբում կանգնած էին մի քանի հետաքրքիր երեխաներ: Ունտէր օֆիցերը ազգաբնակից էր զինվոր և հետեւեալ... ըսցաց հրացանները միասնաբար որոտում են, որից երկու գրեզայից ընկնում են վրաւոր. իսկ պատշգամբի երեխաներից վիրաւորվում են նոյնպէս երկուսը... Այդ բաւական չէ. ոստիկանը գալիս բռնում է ծանրապէս վիրաւորված զոնապանին՝ իբր իր վրա ատրճանակ արձակողի. խեղճ բռնի իսկական իմաստով «մի բռն զանակ» էլ չունէր գրաւանում. տան բնակիչների մի խիստ և ա դարացի յանդիմանութիւնը միայն. կարողացաւ ոստիկանին զգալ տալ իր սխալը և հետանալ... ըսցաց այդ սխալը եղած զոհերի վրա աւելացրեց էլ չորսը...

Ձինուորներին և օֆիցերներին եղած «գնալ» համար բոլոր զինուորներին նրանք պատասխանում էին.

—Մեզ հրամայված է չը միջամտել... Պարզ և հասկանալի:

Բայց մի օֆիցեր, որ կանգնած էր իր զօրքերով հին դուռայի հրապարակի վրա, տեսնելով մի խումբ զինված թուրքերի յանդուգն

շահատակութիւնները, դիմեց նոյն տեղի մօտ գտնվող ոստիկանապետին՝ որ թոյլ տայ իրան զինաթիֆ մեկ այդ խաժամուժ ամրոխիւն. թոյլատրվում է. օֆիցերը անմիջապէս իր զինուորներով շրջապատում է ամբոխին և հրացանները նրանց վրա ուղղելով գոչում է.

—Ձեռքերդ վեր բարձրացրէք.

Վայրագ ամբոխը ցնցված այս անսպասելի իրողութիւնից, իսկոյն գետին է թափում աւտրճանակները, որ հաւաքվելով, նրանց ազատ թողնում են... և սխալ հէնց այդ ազատ թողնելու մէջն է. մի քանի այդպիսի արժատական միջոցներ և մի քանի տասնեակ զինաթիֆ խմբեր բանտ ուղարկել և կարգը բանի ժամվայ մէջ կը վերականգնվէր. իսկ ազատ արձակվածներին զոհարար չէր նորից դիմել ուր հարկն է և նորից զինաւորվել:

Եւ դա իրողութիւն է: Կրասնօլօզսկայա փողոցի վրա, «Դժբաղդայա» հիւրանոցի դիմաց անկնւնի մանրամասնաբար (կարծեմ տուն թաղիւնի) բացարձակ բաժանում էր թուրքերին զէնք և փամփուշտներ:

Ա. Վ.

Կ Ո Տ Ո Ր Ա Մ Ի Յ Յ Ե Տ Ո Յ

(Անանատիս պատմաբան)

Փետրվարի 10-ին եղբայրսպան, անմիտ կոտորածը վերջացաւ: Ի՞նչ ոյժ էր, որ յանկարծ, կարծես կախարդական գաւազանի մի շարժումով հանգստացրեց այն սոսկալի կըրքերը, որոնք ամբողջ շորս օր միայն արիւնով յագեցաւ կամ աւելի ճիշտ ասած, բորբոքվել զիտէին:

Այդ ոյժը դուրս հանեց դարձաւ ազգութիւնների համերաշխութիւնը: Հայ և թուրք ինտելիգենցիան, հոգեորակաւորութիւնը և պատուաւոր ներկայացուցիչները միմեանց ձեռք մեկնեցին, միացան, խաղաղութեան խօսք դուրս բերին արեւմտեան փողոցները:

Եւ գնացի այդ թափօրի հետ: Հաւաքվել էր անպիսի բազմութիւն: Առկից գնում էին նահանգապետ իշխան Նալաչիձէն, Անանիա-Եպիսկոպոս, տեղական զաղին, որի անունը, զբժրախոտարար, չեմ իմանում, շրջապատված բազմաթիւ հայ և թուրք աչքի ընկնող մարդկանցով:

Թափօրը բարձրաձայն ուրանելով առաջ էր գնում և շարունակ կանչում էր ամենքի համար այնքան ցանկալի բառը—«բարեւըդ, բարեւըդ» (հաշտութիւն):

Բագուի փողոցները այդ դժոխային օրերում մարվան ամայնութեամբ էին լցված: Հաշտութեան ձիթնին, որ տանում էր թափօրը, սկսեց հետզհետէ կենդանացնել փողոցները: Բացվում էին փակ դռները, դուրս էին գալիս պաշարման սարսափներին ենթարկված գուռատ ու թուլացած մարդիկ, որոնք խանութում էին առաջ շարժվող բազմութեան հետ, որ դնալով աւելի և աւելի ստուգանաւորում էր:

Հաշտութիւն, համերաշխութիւն... Ո՞րքան կենդանաբար սկզբունք: Եւ նրան տեսնում և գնահատում էին երկու կողմերն էլ: Ուրախ էին հայերը, անկեղծ կերպով ուրախացնել էին թուրքերը: Նրանք հէնց այդպիսի մօտենում էին իրար, ձեռք էին տալիս, խօսում ու ծիծաղում էին միմեան: Այդպէս են եղել թուրքերն ու հայերը Բագուում ամեն ժամանակ: Բայց մի դժոխային շունչ, յանկարծ, անսպասելի և անբացատրելի կերպով, կրակ ու արիւն էր մտցրել երկու ժողովուրդներին մէջ, այդքան սոսկալի կերպով ընդհատել էր տասնեակ տարիների բարի հարեանութիւնը:

Եւ պարտք եմ համարում վկայել, որ Բագուի քաղաքացի թուրք ժողովուրդի շատ նշանաւոր մասը անասելի դժբախտութիւն էր համարում կոտորածը, ոչ միայն չէր համակրում նրան, այլ և աշխատում էր պաշտպանել հայերին: Շատ և շատ հայեր մահից ազատվել են թուրք թուրքերի աներում: Այսօր բոլոր բազմացիներին յայտնի իրողութիւն է, որ թուրք տանալիների մեծամասնութիւնը չէ թոյլ տուել որ կոտորածները մասնին իրանց տնից հայերի բնակարանները: Պատմում են, որ նրանք կանգնում էին իրանց տների մուտքի մէջ և յայտնում էին յարձակողներին, որ միայն իրանց սպանելուց, դիակ դարձնելուց յետոյ նրանք կարող են ֆիստել հայերին: Ոչ միայն այդքան: Նրանք նոյն իսկ հաց, ջուր էին հասցնում տներին մէջ փակվածներին:

Կարելի է հաստատապէս ասել, որ կոտորածի գլխաւոր գործը, եթէ կարելի է այսպէս ասել, բաղկացած էր քաղաքացի ազգաբնակչու-

թեան այն մասին, որին սովոր ենք «տակարար» անունը տալ. դա այն տարրն է, որ Բագուում յայտնի է «դուրի» անունով: Յերեկը նա սովորաբար անց է կացնում պարայ, թէյատաների մէջ, իսկ գիշերը դուրս է գալիս «որսի»: Այդ տարրին միացած էր և դրսից, գիշերից յատկապէս այդ սև օրերին համար եկած բազմաթիւներ:

Մեր հայտնութեան թափօրը անցաւ միայն մի քանի փողոցներով, ուր այնքան սաստիկ չէր եղել կոտորածը: Եւ միայն երկու թուրքի դիակ տեսայ: Ղուբայի մէջ, Շամախու թաղ և այլ քաղաքամասերը, ուր ամենքի վկայութեամբ, կոտորածը հասած էր եղել անգլիական և ծայրայեղութեան վերջին աստիճաններին, թափօրը չը գնաց, երկի չը կամենալով որ ստակալի տեսարանները ցնցեն հայտնութեան մտքով տողորմած մարդկանց:

Այնուհետև քաղաքում տիրեց հանգստութիւն, գոնէ փողոցներում կարելի էր անվտանգ անց ու դարձ անել: Բայց այդ հանգստութիւնը դեռ մարդկանց հաւատը չէ գրաւել: Այն ու սարսափը դեռ տիրում է, և հազարաւոր մարդիկ շարունակ փախչում են Բագուից իրանց ընտանիքներով: Մեծ մասը փախչում է Թիֆլիս:

Եւ էլ այդ փախչողներից մէկն եմ:

Ինձ առաջարկում են պատմել տեսած-լսածներս: Պատմե՛լ... Ինչպէս Ինչպէս կարող եմ պատմել. ինչպէս կարող եմ հաղորդել, ինչպէս, ինչ լեզուով կարող եմ նկարագրել, արեւայայտել այն, որին ես ակնհաստես եմ եղել այս չորս օրվա ընթացքում... Գլուխս պըտրտվում է, աչքերս մթնում, մի սարսուռ է անցնում մարմնովս, գրեթէ վայր է ընկնում դողող ձեռքերս...

Ուստի պատմածներս կըլինեն անկապ, կըցկոտը: Երեսիս մի հատ սպիտակ մազ չը կար, իսկ այժմ անա այս 4 օրուայ միջոցում ճերմակել եմ...

Մարտիկների առաջին օրը ես անտեղեկան անցնում էի փողոցով, յանկարծ յարձակվում եմ ինձ վրա երեք թուրքեր և ինչո՞ւնքի տալով անորձանակ են յարձակվում ինձ վրա: Ուրա սրկնում է և ես վայր եմ ընկնում ձիւնապատ գետնի վրա: Թուրքերը՝ կարծելով, որ ես սպանված եմ՝ նայում, հեռանում են: Բայց ես բախտի բերմամբ նորի իսկ վերաւորված չեի... Դիմացի տանից դալիս է մի հայ և ինձ գրկում տանում է իր ծոց... Ապա մի կերպ հասնում եմ բնակարանս... Այդպիսով ես ազատվում եմ ժահից:

Այնուհետև ես փակված, բանտարկված եմ եղել իմ սեփական բնակարանում... Գանի քանի անգամ ամբողջ բաղկացած ոչ բնիկ, այլ եկեղ շրիկի թուրքերից, յարձակվում է գործել մեր տան վրա՝ կոտորելու, մեզ բնաջնջելու, բայց թուրք տանտիրոջ շնորհիւ, նրա ազաւանք-պալատանքով ամբողջ դատարկաձեռն յետ է գնացել...

Ան աղտեղից դարան մտած՝ ես լուռ, անգոր ախանաւտ եմ եղել մեր տան առջև կառավարող սարսափներին, քստմնելի գործերին... Մեր հարեան տանը դադանացած ամբողջ սպանում, մորթում, յոշտում է կանանց, երեխաներին... Օհ, ես երբեք չեմ մոռանայ և ինչպէս կարող եմ մոռանալ, երբ հենց այժմ էլ, հարիւրաւոր մզոններ հեռու այն վայրերից, ես դեռ լսում եմ կանանց հեծկաւանքը, յուսահատ, սիրտ պատռող սուր ձիւ ու աղաղակները...

ԲԱԳՈՒԻ ԱՂԵՏԱԻ ԳԵՊԵՐԸ

Առաջ ենք բերում «Է. Օ.»-ի թղթակից Օրեստ Սեմինի երրորդ նամակը: «Բագու, 8 փետրվարի, գիշերը: Հաղորդում եմ երէկ չէ անցել օրվայ կոտորածի մասնաւորութիւնները: Պատից, ուր աշխատանքը դադարած է, արտիստ Մօսկու հետ (միայն նա յանգցնեց ուղիկցի ինձ) ես դուրս եկայ: Մարդկանի այդու միջով անց եկանք զէպի Պարսկան և այնտեղից էլ Նիկոլայեւի փողոցով գէպի Բագուի փողոցի խորքը, երէկվայ սարսափների վայրը:

Մանօթ հայերից իմացայ, որ Մարդկանի այդու սպանված է բժշկի Կարաբեկովը: Այդ տեղից էլ իմացանք, որ յատկապէս կատաղի պարտիզանական ընդհանրութիւն տեղի են ունեցել ամսի 7-ին, Ղանիթափայում, Տերգովի և Հայոց փողոցներում: Կողմաւորված են Բուդաղեան, Մայիլեան և ուրիշ անտարականների տները:

Նիկոլայեւի փողոցի մօտ, Բագուի փողոցում մենք տեսանք թուրք ամբողջ, որ պաշարել էր մի հայի խանութ, ուր երկու օր էր նստած էին 3 հայեր: Դուրս կոտորելով, թուրքերը խանութի դռնով ներս միահանում կրակ (զալ) բաց արին մի քանի անգամ իրար ետևից, բայց ապարդիւն: Այդ կրակի ձայնին եկան կազակներ և հայերին շրջապատեցին տարան... Գնում ենք առաջ: Թալանված խանութները դռները փակված են, փողոցի սալաքառակի վրա թափված են անգինքնաւորութեամբ կոտորատված ապակիներ և փաթեթներ թղթեր...

Մօտենում ենք եկեղեցական փողոցին, «Փանտազիա» բաղանիսից սկսած դէպի ներս, մինչև ծայրը, մի վերստաչափ տեղ նա ամբողջապէս ծածկված է թուրքերով:

— Ուրեքներ կարող են անցնել... հարցնում ենք թուրքերին: — Կարելի է, կարելի է...

Բայց և այնպէս մենք չը յանգցնեցինք աւելի առաջ անցնել, որովհետև արդէն մթնում էր (երեկոյան ժամը 6-ն էր): Կանգնելով եկեղեցական և Բագուի փողոցների անկիւնում, մենք դիտում էինք, թէ ինչպէս ամբողջ առաջին շաբթբը մօտեցան թուրքները տանը, «Փանտազիայի» մօտ, շիշերով նախ ձեռքերին: Թուրքերից շատերը կտուրը մազեցին և այնտեղից նախ լցրին տան վրայ: Ներքեից նոյապէս նախ շաղ էին տալիս փեղկերի ու դռների վրա:

Շուտով բոլորովեց կրակը և օդի մէջ սկսեցին թռչել մայիկներից դէպի լուսամուտները կրակի լեզուները:

Տան վերին յարկից լսվեցին զէպի պայթիւններ և աղաղակներ. «Օգնե՛ք, օգնե՛ք»... Ներքեից էլ զէպերն սկսեցին կայծեր փայլել և գնդակներն սկսեցին տեղալ դէպի լուսամուտները:

Այն ինչ ամբողջ աւելի և աւելի դադանաւում էր, զէպի պայթիւններն աւելի և աւելի յաճախ էին լսվում, ծուխը և կրակը սաստկանում էին, սպառնալով ծխախողով անել կամ խորովել պաշարվածներին:

Մարսափը պատեց մեր հոգին պաշարվածների վիճակը տեսնելով:

Մեր ծոց կանգնած էր Թուրքիները ուս աղախինը, որից իմացանք, որ Թուրքիները տանը բնակվում են և վրայից...

Շուտով բոլոր ընդհանրապէս մտնում... Մթնանց և թուրքերը մեզ խնդրեցին հեռանալ... Մտալով մէջ էինք հնգանդիլիում... Ծանապահ-հին, Բագուի փողոցում, մենք կայնք մի չաղ հայի դիակի, թուրքական փափախը գլխին և շատ նման թուրքի: Մեր հարցին, թէ մի՞թէ սա հայ է, թուրքերը պատասխանեցին՝ այո, հայ է, որը փորձել էր երեսը ներկելով և թուրքի գգեստ հազնելով խորթ թուրքերին: Տուն գալով, ես իմացայ, որ թուրքերը ուղղում են 50 ր. տանտիրոջից, եթէ ոչ սպառնում են կողոպտել: Տանտէրը պատասխանեց, որ առաւօտեան արդէն տուել է 25 րուրի: Ես խորհուրդ տուել 15 րուրուց աւելի չը տալ: Այդպէս էլ արինք: Այն ինչ տան դարպասով առաջ մարդին ազմկում էր, պահանջելով խանութպան Յովհաննէսին, որպէս զի նրանից դրամ պահանջեն, սպառնալով կողոպտել: Բայց Յովհաննէսը թագնվել էր: Դիւրեւոր ժամը 8 ին տանտէրերը թողին տունը և թուրք պահանջներով սկսեցին մի ծանօթ թուրքի տուն: Ամբողջ տան մէջ եւ մենակ մնացի: Տանիքը բարձրանալով, ես տեսայ թուրք մայկները տան վրա անգինքն լոյս և լսեցի այն կողմից եկող անընդհատ հրաձգութեան ձայները... Մարտիկի էր... Ըստ երևոյթի սկսեցին այն Բագուի փողոցի գիշերը, որ երէկ սպառնում էին... Ժամը 11 ի մօտերը պառկեցի քնելու: Գիշերը յանկարծ լսում եմ դրանս թիւթիկացի ձայնը:

— Ի՞նչ աստուծո, ներս առէք ինձ, վախենում եմ... Ներս մտաւ աղախինը: Յողթելով շիտթութեան բնական զգացմունք, ես ներս թողի խղճ կնձը, և նա գիշերեց իմ սենեակում:

Աղախին հետ խօսելով, ես տեղեկացայ, որ մի ֆուտուր ծախում է քաղաքում 20 կոպէկով, հացը—10 կոպէկ:

Նրանից և ուրիշներից էլ իմացայ, որ թուրքերը կոտորել են քաղաքի մօտ եկած մի հայ գիւղի բոլոր բնակիչներին... Երեկոյան թուրքերը մէջ լուր էր պատում, որ նահանգապետ Նակաշիճէն ոտից վերաւորված է: Իսպաղի կը ստուգեն այդ լուրը...

Այս օրպէս, փետրվարի 9-ի առաւօտեան ժամը 10-ին քաղաքի կենտրոնից աղանջիւ են հանում զէպերի օրտաներ:

Գնում եմ նայելու, թէ ինչ է կատարվում այնտեղ, որովհետև դարձուրելի անյայտութիւնը վախեցնում է ինձ: Նորից կը գնամ պրօկուրօրի մօտ, իսկ յետոյ կանցնեմ գիշերվայ հրդեհի և թալանի տեղը: Եթէ կենդանի մնամ, մանրամասնութիւնները կը հաղորդեմ: Օրեստ Սեմին

ԲԱԳՈՒԻ ԱՂԵՏԻ ԶՈՒՆԻՐ ՕԳՏԻՆ (Նամակներ Խմբագրութեան)

I
Թիֆլիս, փետրվարի 11-ին
Պ. Խմբագիր. Թոյլ տուէք ձեր լրագրի միջոցով դիմել Թիֆլիս քաղաքի զաղաքականութեանը, խնդրելով վերջին սարսափիլի դէպքերի ժամանակ ֆախված թշուառ բազուցիներին օգնութիւն հասցնել, թէ փողով, թէ իրերով և մթերքներով:

Այն ըտեւս համակրութիւնը, որով Թիֆլիսի հասարակութիւնը վերաբրվեց զաղաքիներին հասած դժբաղդութեանը, ինձ յոյս է տալիս, որ իմ ներկայ կողմ կենդանի արձագանք կը գտնի իւրաքանչիւրի հոգու մէջ:

Նուիրատուութիւնները խնդրում եմ ուղարկել ինձ իմ բնակարանը, Նիկոլայեւի փողոց տուն № 79:

Նուիրատուութիւնների մանրամասն հաշիւը, որի մէջ յիշված կը լինեն նուիրատուների անունը, պարբերաբար կը հրատարակվի տեղական լրագրի միջոցով:

Թիֆլիսի քաղաքագլխի ամուսին՝ Վարվարա Ալեքսանդրօւնա Վերմիշեան

II
Թիֆլիս, փետրվարի 12-ին

Բագուի արիւնահեղ դէպքերը անշուշտ զօրեղ ցնցում պիտի առաջացնեն ամբողջ քաղաքակրթ աշխարհում, իսկ հային՝ խոցւած ու սգաւոր հայրի պիտի ստիպեն աւելի շրջապատից, աւելի աշխուրջ լինելու տիրող պայմանների, ներկայ իրականութեան վերաբերմամբ: Կատարված շարքերը պատահականութեան արդիւնք չէ, այլ մի կազմակերպված գործ, որի բուն արմատները դեմ էլ ուղղված պէտք է լինեն մեր համերաշխ շահերը: Այո, չարիքը արմատալ պէտք է ոչնչանան, որպէս զի նա նորից ծիրեր չարձակէ: Բայց դա ապագայի գործ է, իսկ այժմ պէտք է կանգնեցնել թափվող արիւնը, պէտք է ամօքել քաղաքը վերքերը: Այդ նպատակով խնդրում եմ ընդունել «Էմբլեմ» ընկերութեան տպարանի ծառայողների ու բանտարկների կողմից հեռեւեղ փողբիկ նպաստը:

Ն. Մատինեան, 1 րուրի 50 կ., Յ. Յովսէփեան 1 ր. 50 կ., Գ. Դարբիշեան, Զ. Բաբուրեան, Ս. Մանուէլեան, Գ. Յարութեան, Ռ. Մովսէսեան, Ս. Ստեփանեան, Մ. Տէր-Աբրահամեան, Ս. Հայրապետեան, Ա. Լաշաբեան, Կ. Սառաւեան, Ս. Սաղոյեան, Ա. Սիւգալ, Մ. Միքայիլեան, Կ. Կալաթով 1-ական րուրի, Ս. Վարդուհան, Յ. Բաքիւնեան, Կ. Մակինաշեան, Բ. Փիլիպեան, Բ. Փիլիպեան, Վ. Դարբասեան, Փ. Գուրգիւսեան, Ս. Թաւրաղեան, Մայիլեան, Վախագեան, Լ. Յակոբեան, Ս. Բակաշիճէ, Մ. Գուրգիւսեան, Ս. Սարգսեան, Գ. Տէր-Առաքելեան 50-ական կոպէկ: Բարձրագույն 40 կոպէկ, Պ. Պողոսեան, Ա. Կազմակ 30-ական կոպէկ, Գ. Լաշաբեան, Գ. Յակոբեան 25-ական րուրի, Նիկոլայեւի լիւստրանտ, Կոտոյեան, Ա. Կուզմենի Ս. Միքայիլեան, Ս. Արաշալիլի, Մ. Արաշալիլի, Կալիշիլի, Ա. Սարգիսի, Շ. Ինասարիճէ, Ա. Վիկով 20-ական կոպէկ, Ե. Թիֆլեան 3 րուրի: Ընդամենը 30 րուրի 50 կոպէկ:

III
Հետեւեղ գումարները ստացանք Բագուի աղէտի գոհներ օգուրի:

1) Ներսիսեան դպրոցի ուսուցչական խմբից 86 ր. 2) Բագուի փողոցի շրջանում հաւաքված 18 ր. 65 կ., 3) Գ. Մարեանից և Գարսիակից 10 ր., 4) գնաւազան անձ ըրից 15 ր. 50 կ. 5) Մանթաշեանի գրասենեակի ծառայողներից 243 ր., 6) Թաւառեանի բարձրասարայի վաճառականներից և գործակալատարներից 394 ր. 60 կ., 7) Սուրբաղեանի բարձրասարայի վաճառականներից 50 ր. 10 կ., 8) գնաւազան անձներից 53 ր. 70 կ., գումարն է 891 ր. 45 կ.: Ուրեմն ընդամենը ստացել ենք 1055 ր. 80 կ.: Նուիրատուների ցուցակը կը տպենք յաջորդ անգամ:

IV
Ո՛ր Ի՛ր Ե՛ն Ք

Ո՛ւր ենք, ընթերցող: Մենք, լրագրական աշխատողներս, չորս օր է, չը գիտեցինք այս հարցին ինչ պատասխան տանք: Մենք շժամ չենք, մենք կողքի կը տեղի և ժամանակի հակադրութիւնը:

Ո՛ւր ենք: Չորս օր է, կարդում ենք լրագրական տեղեկութիւններ: Դեռ մի թշուառ բախտ կը լինէր, եթէ մեզ միայն կարդալը տուած լինէր: Կայ և աւելի սարսափելի: Այս օրպէս Թիֆլիսի փողոցները լըն են փախուսականներով: Նրանք պատմում են, նրանք նկարագրում են, փաստեր են տալիս, անդորմ առատութեամբ ճվող փաստեր:

Մենք պէտք է լսենք նրանց, պէտք է բարեօրէնք մեր կրթին, աշխատենք լինել սառնասիրտ, ուշադիր, որպէս զի մեր իմացածը հաղորդենք ձեզ:

Մեր պարտն է դա: Գիտենք, որ անհամբեր սպասում էք մեր խօսքին, գիտենք, որ շատ իրաւացի կերպով դուք ներկայ սև՝ քաղաքներում աւելի խիստ պահանջուող էք, ուղղում էք, որ երկար խօսենք, շատ խօսենք, ոչինչ չը թաղցնենք, որպէս զի ձեր առջև որքան կայելի է լաւ պատկերանայ Բագուն, որի անուրը այսուհետև պիտի լինի ահալի, ճիւղային սպանութիւն...

Եւ մենք շատ լաւ գիտեմք ենք մեր պարտաւորութիւնը: Բայց...

Բայց լինում են օրպէս, երբ ամենատուրեւ, փորձված գիտուրն անգամ չէ կարողանում կատարել իր պարտը: Կայ մարդկային հարաւորութեան մի սահման: Կայ մի գիծ, որից դէպք այլ ևս մարդ կամի, դիմացկանութեան, ոյժի տէք չէ, այլ շղիլից, սրտից, զգացմունքներից կազմված մի էակ:

Գրի՛ ձեզ համար... Այո, պէտք է, և մենք գրում ենք: Բայց ինչպէս գրել:

Ինչպէս գրել, երբ ձեռքը դողում է սրտի ուժգին բաբախումներից: Ինչ գրել, երբ գրելը չէ հպատակվում ինքնագրական բոլոր ճիւղերին:

Եւ ինչ գրել, ահա տանջող, խորովող հարցը: Ինչ գրել, երբ անհնարին է արեւնոտ եղիւթիւնների յաջորդական լինել գտնել, պահել ձեռքում, երբ բոլոր մանրամասնութիւնները, բոլոր դարձուրելի փաստերը միախառնվում են, դառնում են մի անհեղ, այրող, տոչորող արեւան բիծ, որ ընտում է ամբողջ էութիւնը, բթացնում է մտածելու կարողութիւնը:

Գրել այսպիսի դրութեան մէջ...

Ահ, նայ իսկ հայն էլ չէ կարողանում այսպիսի անհեղի դէպքեր նկարագրել:

Եւ սակայն հայ շատ շատերից առաջ պիտի գնացած լինէր այդ բանի մէջ:

Պատմական երկնք ու երկար անցեալ մեզ տալիս է գոնէ այդ դժբախտ իրաւունքը: Դաւերից ի վեր մենք կոտորվող աղէ էինք: Դաւերից ի վեր մեզ կոտորում էին, իսկ մեր առջև զբված էր մի խիթարութիւն միայն՝ թղթիկ հաղորդել սրտի միջից հոսող արտասուքները: Բայց մենք դարբերից ի վեր սակաւախօս էինք և մեր ցեղական այդ բախտի մէջ: Մենք չը կարողացանք ստեղծել մի լեզու, յատկապէս կոտորածների լեզու, որով կարողանայինք աշխարհը լացացնել: Մենք բաների պարձուածքների մէջ չը կարողացանք ցուցնել մեր արեւան գետերը:

Դարբերից ի վեր մենք միայն սառն, միանման, անհոգի հաշիւներ էինք տալիս, կոտորեցին... Եւ ի՞նչ գտնվում էին աւելի զգալուն, աւելի ճարտար զրոյներ, որոնք ուղղում էին այդ դժբախտ, բայց մեզ հարազատ բանից բխող զէն գնալ, քիչ բացվել, քիչ լաց լինել, այդպիսիներն էլ աղէտի ծայրագոյն աստիճանը արտայայտելու համար կարողանում էին միայն այն ասել, թէ եկել է աշխարհի վերջը...

Այսօր ես, հայ գրողս, արեւելի և դիակները ծանրութեան տակ խեղդված, հասկանում եմ իմ բախտակից նախահայրի ամբողջ հոգեբանութիւնը:

Դրե՛լ... Բայց ինչ գրել, ինչպէս գրել...

ԲԱԳՈՒԻ, ԱՅՍ ԱՆԳԱՄ ՍԵՆԻ ԻՐԱՆԻՆԻ

Թիֆլիս

Անշուշտ խմբագրութիւնը սպասում է և իր թղթակցի տեղեկութիւններին, դուրս է կարծում է, որ նա այլ ևս գոյութիւն չունի:

Չը գիտեմ դժբաղդաբար ասեմ, թէ բարեբաղդաբար, կենդանի եմ մնացել, որ թոյլ գրչովս տամ ձեզ եղբայրասպան աղէտի եղիլի նկարագրութիւնը:

Ո՛րտեղից: Ինչ կերպ:

Չորս օր շարունակ տանը փակված, միայն պայթիւններ էինք լսում: Կրպաններին, ատրճանակներից պայթիւններ, իսկ նրանց առաջացած հոտաչանքները, վայնասուները, վերջի «մախ»-երը, ապա կիրպանի մնացածները լաց ու կոծը, աղաղակը, ճիւղ-այդ բոլորը մեզ համար անխելի էին մնում:

Նրանց առաջացած արցունքների հեղեղը մեզ համար անտեսանելի:

Սաւար էր օրը, նոյնպէս և գիշերը: Տարօրինակ և միօրինակ էր մեր կեանքը այդ կըտորը մի քանի օրվայ ընթացքում:

Միմիայն գիշերները այդ միօրինակութեան ներդաշնակութեանը վրդովվում էին բայց ոչ շնորհի անվերջ ոռոնցները, որոնք զենքերի պայթիւնից աւելի երկարում և աւելի չարագուշակ ինտոնացիայի էին փոխվում:

Ո՛չ ահից,—այլ անգիտութիւնից և յուսահատութիւնից փոքր ի շատէ ինձ թեթեւացնում էր բնականաբար տեղէնօնը. օր ու գիշեր նա, ինչպէս և բոլոր տեղէնօնները, դադար չունէր: Անգիտութեամբ և անգիտութեամբ միմիայն փոխանակվելու: Քաղաքի զանազան ծայրերից, կենտրոններից, նաւթահանքերից և գործարաններից միշտ քաղում էի կցկտոր, անորոշ, երբեմն հակասական, երբեմն ստուգութեան կարօտ տեղեկութիւններ:

Հինգ օր կտրված աշխարհից այս բառի ամենաընդարձակ մտքով:

Հինգ օր կենդանի թաղված...

Լսում ես միայն պայթիւններ. հատ-հատ, ապա խմբովին, նորից լուռութիւն, նորից մի և նոյնը:

Փոշեր է:

Հընդհուպ է մի տուն, քիչ հեռու ծխվում է մի ուրիշը:

Վազում ես հեռախօսի մօտ, հազիւ մի ժամվայ ընթացքում կարողանում ես լսել մօտ տասնեակ անուններ, որոնցից ամենից շատ ձայն ստացվում է տեղական կոմիսերատու Ա. Ղէքսանդր Արամանը:

Կոտորել են ամբողջ ընտանիքը, նոյն տան բոլոր ընտանիքներն, երկու սեռի, ամեն հասակի—միմիայն հայերին...

Իսկ կրակը յուսահատեցնող անտարբերութեամբ կլանում է իր զոհներին, խաղաղացնում է իր ճիրանները մէջ և ապա մի կոյտ մոխիր դարձնում և գետին թափում...

Անցնում է սարսափելի գիշերը, տեղի է ապշա նոյնպէս սարսափելի ցերեկին:

Մի և նոյն դրութիւնը:

Նորից հրդեհ, այրվում է Բալարէկ Լալաբիկ տները, իրան սրբախողովոյ են արել,—տեղեկացնում է նոյն տեղէնօնը:

Այդպէս էր ամեն տեղ:

Վերջապէս չորեքշաբթի կէսօրից յետոյ մօտ ժամը 5-ին աւետիկեց «հաշտութեան» լուրը: Երկու ազգութեան հոգևորականութիւնը կուռով ազգաբնակչութեան ներկայութեամբ համաժողով են, հաշտութիւն են երդվել:

Ծնծացին փողոցները:

Բացվեցին դռները և լուսամուտները:

Երեսաց անտարբեր և անգուժ լոյսի սփռվող տեսքը:

Աւաղ, չը կար ուրախութեան, ցնծութեան ոչ մի պատճառ:

Վօրձեցովկայա և Արմանսկայա փողոցները սուգի մի դամբարան էին ներկայացնում: Այրված, գնդակահար արած դիակներ, այս ու այն կողմ գցած մարմինների զանազան մասեր, կտորներ:

Իր սիրելիների դիակները որոնող մերձաւորներ իրանց սիրտ քրքրող աղերսանքներով, լաց ու կոծով:

Այրված տները պատեր, կողոպտված ընտանեկաններ, խանութների անարժէք բեկորներ, դաշնամուրի, բազմոցների կտորներ, հրահրող, քրքրող ամբոխ և քարացած, անտարբերացած մթնոլորտ:

Անցնում ես սուգի այդ դամբարանից, գնում ես միւս փողոցներով. Սպանված դիակներ—մարդկանց, ձիերի, արեւնոտ քարեր, մայթեր, ներկված ձիւն, կտրված ապակիներ և զրուներ, վախկոտ, գունատ և յուսահատ ղէմքեր, կասկածոտ քայլեր և շարժումներ:

Այս բոլորը ոչ վայրենիների աշխարհում, ոչ պատերազմի դաշտում, ոչ թշնամու բանակում:

Բազում, երկու հարկան ազգութիւնների մէջ:

Գրիտոնեայ մարդկանց աշխարհում և նւրանց շրջապատում:

Ան տեղէնօնի հաղորդածը և ստացածն թուղթիկ տպագրութիւններն հիմնված չորեքշաբթի երեկոյիս և հինգշաբթի առաւօտեան տեսանքներն վրա:

Պէտք է բոլորը ստուգել, պէտք է մանրասան տեղեկութիւններ հաւաքել. բայց զբաղմբայնոր անկարելի է, քանի որ դիակները դեռ չեն հաւաքված:

Ձոնրի թիւը հարեւրների է հասնում:

